ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԸ ԸՆԴԵՐՔԻ ՄԱՍԻՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՕՐԵՆՔԸ

ԸՆԴԵՐՔԻ ՄԱՍԻՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. Ընդերքի մասին 2011 թվականի նոյեմբերի 28-ի ՀՕ-280-Ն օրենսգրքի (այսուհետ՝ Օրենսգիրք) 27-րդ հոդվածի 1-ին մասի 1.1 կետում «օգտակար հանածոյի արդյունահանման» բառերից առաջ լրացնել «մետաղական օգտակար հանածոյի դեպքում» բառերը, ինչպես նաև «մետաղական օգտակար հանածոյի դեպքում՝ 5, իսկ ոչ մետաղական օգտակար հանածոյի դեպքում՝ 10» բառերը փոխարինել «5» թվով:

Հոդված 2. Օրենսգրքի 27-րդ հոդվածի 1-ին մասը լրացնել նոր՝ 1.2 կետով՝ հետևյալ բովանդակությամբ.

«1.2) ոչ մետաղական պինդ օգտակար հանածոների նոր հանքավայրերը, որոնց պաշարները կհաստատվեն 2021 թվականից սկսած, օգտակար հանածոյի արդյունահանման նպատակով երկրաբանական ուսումնասիրության՝ հանքավայրի կամ հանքավայրի աշխարհագրորեն առանձնացված տեղամասի պաշարների վերագնահատման համար մինչև 3 տարի ժամկետով, եթե հանքավայրի պաշարները գնահատվել են երկրաբանական ուսումնասիրության համար հայցվող դիմումին նախորդող օրվանից՝ 10 և ավելի տարի առաջ, և կարող է երկարաձգվել միայն սույն օրենսգրքի 42-րդ հոդվածի 2.3-րդ մասով սահմանված դեպքում»:

Հոդված 3. Օրենսգրքի 27-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«3) ոչ մետաղական պինդ օգտակար հանածոների և հանքային ջրերի արդյունահանման նպատակով՝ սահմանված կարգով փորձաքննություն անցած նախագծի համաձայն՝ մինչև 20 տարի ժամկետով, որը կարող է երկարաձգվել՝ համաձայն սույն օրենսգրքի 55-րդ հոդվածով սահմանված

կարգի՝ մինչև 20 տարի ժամկետով»:

Հոդված 4. Օրենսգրքի 27-րդ հոդվածի 1-ին մասը լրացնել նոր 3.1 կետով՝ հետևյալ բովանդակությամբ.

«3.1) ոչ մետաղական պինդ օգտակար հանածոների նոր հանքավայրերը, որոնց պաշարները կհաստատվեն 2021 թվականից սկսած, ոչ մետաղական պինդ օգտակար հանածոների և հանքային ջրերի արդյունահանման նպատակով՝ սահմանված կարգով փորձաքննություն անցած նախագծի համաձայն՝ 20 տարի ժամկետով, որը կարող է երկարաձգվել՝ համաձայն սույն օրենսգրքի 55-րդ հոդվածով սահմանված կարգի՝ 20 տարի ժամկետով: Մինչև 20 տարի ժամկետով թույլտվություն կարող է տրամադրվել, կամ տրամադրված թույլտվության ժամկետը երկարաձգվել միայն այն դեպքում, երբ պահանջվող ժամկետում արդյունահանվում են հանքավայրի կամ հանքավայրի աշխարհագրորեն առանձնացված տեղամասի գնահատված և հաստատված ողջ հաշվեկշռային պաշարները»:

Հոդված 5. Օրենսգրքի 40-րդ հոդվածի 5-րդ մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«5. Եթե երկու կամ ավելի անձ դիմում են ներկայացրել ընդերքի միևնույն տեղամասի համար՝ անկախ հայցվող իրավունքի տեսակից, ապա նախապատվություն է տրվում այն դիմումատուին, որի դիմումն առաջինն է գրանցվել: Այն դեպքում, երբ առաջին դիմումատուի դիմումի վերաբերյալ որոշման կայացման համար բոլոր փուլերը դեռ չեն ավարտվել, իսկ մյուս դիմումատուի դեպքում՝ ավարտվել են, մյուս դիմումատուի դիմումի վերաբերյալ որոշման կայացման ժամկետը կասեցվում է մինչև առաջին դիմումատուի դիմումի վերաբերյալ որոշման ընդունումը»:

Հոդված 6. Օրենսգրքի 42-րդ հոդվածի 2.2-րդ մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«Օգտակար հանածոյի արդյունահանման նպատակով երկրաբանական ուսումնասիրության թույլտվությունը տրամադրվում է հանքավայրի կամ հանքավայրի աշխարհագրորեն առանձնացված տեղամասի պաշարների վերագնահատման համար՝ մինչև 3 տարի ժամկետով և առանց երկարաձգման հնարավորության, բացառությամբ սույն հոդվածի 2.3-րդ մասի, եթե հանքավայրի կամ հանքավայրի աշխարհագրորեն առանձնացված տեղամասի պաշարները գնահատվել են երկրաբանական ուսումնասիրության թույլտվության համար հայցվող դիմումին նախորդող օրվանից՝ մետաղական օգտակար հանածոյի դեպքում՝ 5, իսկ ոչ մետաղական պինդ օգտակար հանածոների նոր հանքավայրերի դեպքում, որոնց պաշարները կհաստատվեն 2021 թվականից սկսած՝ 10 և ավելի տարի առաջ»:

Հոդված 7. Օրենսգրքի 49-րդ հոդվածի 1-ին մասում «նախորդող 10 տարվա ընթացքում» բառերը փոխարինել «նախկինում» բառով:

Հոդված 8. Օրենսգրքի 49-րդ հոդվածը լրացնել նոր 1.1 մասով՝ հետևյալ բովանդակությամբ.

«1.1) Ոչ մետաղական պինդ օգտակար հանածոների նոր հանքավայրերի դեպքում, որոնց պաշարները կհաստատվեն 2021 թվականից սկսած, իրավաբանական անձը (այդ թվում՝ օտարերկրյա պետության առևտրային կազմակերպությունը) օգտակար հանածոների արդյունահանման իրավունք ստանալու նպատակով կարող է դիմել լիազոր մարմին այն հանքավայրի կամ հանքավայրի աշխարհագրորեն առանձնացված տեղամասի համար, որտեղ դիմումը ներկայացնելու օրվա դրությամբ նախորդող 10 տարվա ընթացքում ընդերքաբանական փորձաքննության արդյունքներով հաստատվել են օգտակար հանածոյի պաշարներ»:

Հոդված 9. Օրենսգրքի 50-րդ հոդվածի 1-ին մասի 1.2 կետը խմբագրել հետևյալ բովանդակությամբ.

«1.2) մետաղական օգտակար հանածոյի դեպքում՝ հանքավայրի կամ հանքավայրի աշխարհագրորեն առանձնացված տեղամասի գնահատված և հաստատված ողջ հաշվեկշռային պաշարների քանակը: Եթե մետաղական օգտակար հանածոյի դեպքում հանքավայրի կամ հանքավայրի աշխարհագրորեն առանձնացված տեղամասի գնահատված և հաստատված ողջ հաշվեկշռային պաշարների քանակը գերազանցում է հանքավայրի տարեկան արտադրողականության 25-ապատիկը, ապա կազմվում և ներկայացվում է հանքավայրի կամ հանքավայրի աշխարհագրորեն առանձնացված տեղամասի գնահատված և հաստատված ողջ հաշվեկշռային պաշարների արդյունահանման ընդհանուր պլանը՝ ըստ 25-ամյա արդյունահանման փուլերի՝ մանրամասն կազմելով փորձաքննվող առաջին փուլի նախագիծը»:

Հոդված 10. Օրենսգրքի 50-րդ հոդվածի 1-ին մասը լրացնել նոր 1.2.1 կետով՝ հետևյալ բովանդակությամբ.

«1.2.1) ոչ մետաղական պինդ օգտակար հանածոների նոր հանքավայրերի դեպքում, որոնց պաշարները կհաստատվեն 2021 թվականից սկսած, ոչ մետաղական օգտակար հանածոյի դեպքում՝ հանքավայրի կամ հանքավայրի աշխարհագրորեն առանձնացված տեղամասի գնահատված և հաստատված ողջ հաշվեկշռային պաշարների քանակը: Եթե հանքավայրի կամ հանքավայրի աշխարհագրորեն առանձնացված տեղամասի գնահատված և հաստատված ողջ հաշվեկշռային պաշարների քանակը գերազանցում է հանքավայրի տարեկան արտադրողականության 20-ապատիկը, ապա կազմվում և ներկայացվում է հանքավայրի կամ հանքավայրի աշխարհագրորեն

առանձնացված տեղամասի գնահատված և հաստատված ողջ հաշվեկշռային պաշարների արդյունահանման ընդհանուր պլանը՝ ըստ 20-ամյա արդյունահանման փուլերի՝ մանրամասն կազմելով փորձաքննվող առաջին փուլի նախագիծը»: